ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1173 - Ա

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ «ՀԱՐՄՆԱՔԱՐ» ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՃԵՄՈՒՂՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ և 16-րդ մասերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. Ստեղծել «Սևան» ազգային պարկի «Հարսնաքար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածում ճեմուղու կառուցմանն առնչվող գույքային, հողօգտագործման, քաղաքաշինական, բնապահպանական, ֆինանսական և կազմակերպական հարցերի ուսումնասիրման միջգերատեսչական աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ):

2. Հաստատել՝

1) աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) աշխատանքային խմբի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված պետական մարմինների ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա

ընթացքում աշխատանքային խմբի ղեկավարին ներկայացնել իրենց ներկայացուցիչների թեկնածությունները: Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի ներկայացուցչի թեկնածությունն ապահովում է կոմիտեի նախագահը:

4. Առաջարկել Սևան համայնքի ղեկավարին և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային խմբի ղեկավարին ներկայացնել իրենց ներկայացուցիչների թեկնածությունները:

5. Գեղարքունիքի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում մարզպետի աշխատակազմի աշխատողներից նշանակել աշխատանքային խմբի քարտուղարին և ապահովել խմբի կազմակերպատեխնիկական սպասարկումը:

6. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում վարչապետին ներկայացնել աշխատանքային խմբի գործունեության արդյունքներով կազմված ամփոփ զեկույցը և առաջարկությունները՝ համաձայն սույն որոշման N 2 հավելվածի:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 810-Ա որոշումը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման մասին համապատասխան անձանց պատշաճ ձևով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ